


ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԱՐԻԱ
Տարեկան . . 12 Ֆր.
Վեցամսեայ . . 6 "

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ
Երկու թիւ ձեկ ծրարով
Տարեկան . . 14 Ֆր.
Վեցամսեայ . . 7 "

ԱՄԵՐԻԿԱ
Տարեկան 2.60 Տոյար
Վեցամսեայ 1.50 "
Կ Ա Ն Խ Ի Կ

Ծրանշանակ տողը
20 ւանդիւր



Լ Ր Ա Գ Ի Ր

Ա Ջ Գ Ա Յ Ի Ն Ե Ի Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ԱՄԵՆ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

Հ Ա Ս Յ Ե

Redaction du journal

„Iravounk“

VARNA (Bulgarie)

Редакция

на вѣстникъ

„Иравункъ“

ВАРНА

Գրութիւնք եւս
չեն տրոշիր

Ա. Ջ. Գ.

Պուլկարիոյ եւ Ռ. մանրոյ գլխաւոր քաղաքներու միւր յարգոյ թաժանորդներէն կը խնդրուի որ փութան իրենց բաժնեկիւնները շրջիլ։ Այս առթիւ կը գեկուցանենք թէ նպատակ չունինք մօտ ժամանակի մէջ ճամբորդութիւն ընելու ուրիշ տարիներու նման։

ԹԻԱՊԱՐՏԸ

Այս երկասիրութեան Բ. հասորին 384 երեսները տպագրուած են։ մնաց եւլը որ 41 երեսի չափ կըլլայ, երեք շաբաթէ կամրողջանայ։

Ա. հատորը (162 երես) 1 ֆրանք
Բ. հատորը (424 երես) 2 "

ՔԵՂՈՒՆԻ՞՞

Բ. ՏԱՐԻ ԹԻԻ 1—10 ԿԱԶՄՈՒԱԾ

Իսկապէս իր տնունին համապատասխանող ի հոյ մամլոյն պատիւ բերող ԳԵՂՈՒՆԻ պատկերազարդ հայաթերթը ստացանք վիենտիկի Ա. Ղազարու տպարանէն։ Գերընտիր ու փայլուն թուղթի վրայ տպուած 40 մեծագիր քառածաւ թերթերէ կը բաղկանայ շատ գեղեցիկ կազմով մը։ Ազգային կեանքէ տնունում բաւմանիւ նորագոյն պատկերներէ զատ, այս ԳԵՂՈՒՆԻ զարգարտած է նաեւ եօթը հատ բազմագունի պատկերներով սինն միտէն գեղեցիկ եւ ուշագրաւ։ Այս գործը կը գեւազանցէ ցարդ լոյս տեսածները։ Իրաւամբ կարելի է ըսել, գեղարուեստական թանկագին կոթող մըն է, հայ մամլոյն եւ ճաշակին պատիւ բերող, և զոր կրնանք հրապարտութեամբ մեզ գրացի շատ աղգերու աչքին առջեւ պարզել, փստահ ըլլալով թէ բոլոր օտար գիտողներուն եւս հիացում պիտի ազդէ։

ԳԻՆՆ Է 10 ՖՐ.

Ստանալու համար գիմել՝
Հայկական տպարան, Ս. Ղազար
(Խոալիս) վիենտիկ

ՄԱԿԵԴՈՆԻԱ

ՔՐԻՍՏՈՆԵԱՏ ԵՒՐՈՊԱՅԻ ԴԻՐՔՐ

Շար. մախ քիռէն եւ վերջ.

Չէ կարելի ուրանալ որ տինամիթի ոճիւրը ամենէն մեծ առիթը ընծայեց թուրքերուն իրենց թշնամիներու դէմ խիստ յարձակում մը ընելու։ Հաւասարապէս ճշմարիտ է որ թուրք իշխանութիւնը ոճիւրն ծրագրին լաւ տեղեակ էր եւ հակառակ պետութեանց ներկայացուցիչներու անոր գործադրութիւնը կասեցնելու համար ըրած խնդրանքին զայն արգիլել չը փորձեց։ Բայց աստի, շատ հաւանական է տինամիթը ծովի ճամբով Սէլանիկ բերուեցաւ եւ ոչ Պուլկարիաէն։ Ապա երկար շարաթներու ընթացքին մէջ զօժարին ականներ պատրաստուեցան, հոգ եւ աւազ այլուր փոխադրուեցան, ուսմանին խնամքով տեղաւորուեցան եւ ասոնց ամէնը Օսմ. ոստիկանութեան աչքին առջեւ, որը հակառակ հիւպատոսական ազդարարութեանց, ոչինչ, բացարձակապէս ոչինչ ըրաւ։ Թուրքիա հետեւապէս մեծապէս մեղադրելի է եւ ասոնց հետեւանքով անոր գործադրած կոտորածներուն աչք փակելէն աւելի մեծ սխալ չը կրնար ըլլալ։

«Սվէթ» աւելի առաջ կերթայ։ «Սէլանիկի դէպքին վրայ կատարուած քննութիւնները, կապացուեցան թէ տինամիթի ոճիւրը գործադրող Մակեդոնական զօմիթէի անդամները յայտնապէս Պուլկարիոյ զէմ լարուած միջին միջնայութեան մը պարզ գործիքներն էին։ Սէլանիկի մէջ տեղի ունեցած պայթուածքէն վերջ թուրքիա եւ Աւստրիա «սկսան» իրենց թղթերը ցուցնել։ Աւստրիական նաւատորմը յանկարծ «Սէլանիկի առջեւ երեւցաւ։ Թուրք «բանակները Պուլկարիոյ վրայ յառաջանալու պատրաստուեցան։ Իրենան «եկաւ թէ ոճիւրի պատրաստութիւնը թուրք կառավարութեանէն գաղտնի պահուած չէր։ Իրողութիւնը եղելու «թիւնէն երեք շաբաթ առաջ կը գիտացուէր... Դուռը ինք պատասխանաւոր էր որ տեղի ունեցածներուն համար, որովհետեւ ինք գիտէր թէ «ինչ կը պատրաստուէր եւ պէտք եւ «զամ նախազգուշութիւնները ձեռք «առնել զանց ըրաւ։ Ֆրանսական «հիւպատոսը դէպքին նախորդ օրը «Սէլանիկի վայրէ գաղաշացուց տեղի «ուսնանալիք դաւադրութեան դէմ, «բայց անոր պատասխան տրուեցաւ «թէ ամէն ինչ կարգին էր։» (*)

(*) «Սվէթ» 5 Մայիս 1903

Ռուս կառավարութիւնը թոյլ կուտայ որ կարծուի թէ ինք Պալքան-Լան գործերը կը դիտէ Աւստրիական տեսակէտին եւ կոմս Կոլոխովսքի բնականաբար հպարտ կզգայ ինքզինք իր երկրին եւ անոր դարաւոր թշնամիին միջեւ ելեւան եկած լաւ հասկացողութեան առթիւ։ Բայց արդի ժամանակի ժողովուրդներու զգացումներն են որ վերջ ի վերջոյ խաղաղութիւն կամ պատերազմ կորոշեն եւ ոչ կառավարութիւնները։ Եւ ուսումնարանի բոլոր կուսակցութիւններու օրգանները միահամուռ կը դատապարտեն կեղոնական եւրոպայի ուղղութիւնը։ Կարեւոր թերթերէ եւ Ս. Բեգրսպուրկի գլխաւոր հանդէսէն քանի մը քաղաքացի պիտի կարենան զօրաւոր լոյս սփռել ազատութեան համար կուռզ Մակեդոնացիներու ի նպաստ արծարծուած կրքերու վրայ։

«Գիւրման կառավարութեան թուրքիոյ վրայ ձեռք բերած ազդեցութիւնը այլ եւս մէկու մը համար դադարիք չէ։ Ինչ որ Գիւրմանիա հրամայէ թուրքիա կը գործադրէ։ Ինչպէս ուրեմն Գիւրմանիա Մակեդոնիոյ մէջ գործած ոճիւրներու սարսափներու եւ ամօթալից անկարգութիւններու միանգամ ընդ միշտ վերջ մը դնելու համար պէտք եղած բարձր շարտասաներ։ Աւետարական եւ գործնական տեսակէտէ մը Գիւրմանիոյ համար կարեւոր է որ թուրքիա Պուլկարիոյ հետ պատերազմի բռնուի։ Գիւրմանիոյ ուղածը անուղղակի կերպով, եւ կամ առայժմ Աւստրո-Հունգարիոյ միջնորդութեամբ, ազդեցութիւն ձեռք բերելու Պալքանեան Գիւրմանիաներու վրայ որոնք Գիւրման որովայնը պիտի երթան երբոր Աւստրո-Հունգարիա Բերուսիացիներէն կլլուի։ Գիւրմանիա կուզէ բաց Գիւրման ճամբայ մը ունենալ Համպուրկէն ինչպէս Պարսից ծոցը Պոլսոյ, Վուփորի եւ Պաղատարի ճամբով։ Եւ այս ուղղութեան է որ կը հետեւի։ Իր այս խաղին մէջ թուրքիոյ եւ Պուլկարիոյ միջեւ պատերազմ մը իրեն համար կարեւոր յաջողութիւն մը պիտի ըլլայ, երիտասարդ իշխանապետութեան տկարացումովը։ Այս քաղաքականութիւնը անհրաժեշտօրէն իր հակազդեցութիւնը պիտի ունենայ Ռուսիոյ վրայ։ Որովհետեւ եթէ Ռուսիա Պուլկարիոյ դատը պաշտպանէ, նիւթապէս պիտի տկարանայ։ Եթէ հեռու կենայ բարոյապէս պիտի տկարանայ։ Երկու պարագաներուն ալ շահողը Գիւրմանիան պիտի ըլլայ... Բարենորոգումներ առաջարկուեցան, որոնց յաջողութեան վրայ ոչ ոք հաւատք ունի։ Եւրոպա իր փափաքը մեղմիւր կը յայտնէ։ Բայց Գիւրմանիաներու բնա-

ջնջումը կը շարունակուի։ Երբ Մակեդոնացի Գիւրմանիաներէ արիւնի լիճէ մը զատ ալ լաւ մը չըմնայ, մենք զօրաւոր պատճառներ ունինք հաւատալու թէ, թուրքիա հետեւեալին նման յայտարարութիւն մը պիտի ընէ «Երբեք պէտք էր որ բարենորոգումները ներմուծուէին բայց առայժմ անոնք որոնց ի նպաստ ասոնք պատրաստուած էին այլեւս չեն ապրիր» (*)


Աւելի լուրջ «Նովոս Վոյսիս» կը գրէ։ «Թուրքերուն եւ իրենց գաղտնի բարեկամներուն հաշիւը ակնհեւ է։ Պուլկար իշխանապետութեան ջնջումը, որ հակառակ իր կրաւորական հաւատարմութեան տակաւին Մակեդոնացիներու գլխաւոր նիցուկն է, Պուլկարիոյն էն յարմար ելքն է ներկայ զօժարութիւններէն որոնց մէջ կը գտնուի։ Բայց այս տեսակ լուծում մը մեր Ռուսական եւ Սլաւական շահերուն կը համապատասխանէ։ Կըրնանք Պուլկարիոյ աւերումին, կամ նոյն իսկ Մակեդոնացի պուլկար ժողովուրդին արդի կոտորածին հաւանել... Եւսօրինակ լուծում մը տպահովապէս Պալքանեան թերակղզին Սլաւ հանգամանքը իրենց կարգ մը եսամոլ ծրագրիներու իրագործումին արգելք նկատողներու յատակագծին մէջ տեղ կը ընէ։ Հոս թուրքերը կրաւորական գործիքներ են ուրիշներու ձեռքին մէջ» (**)

Այսօրվ Ռուսիոյ մէջ ամենէն յարգուած ամսահանդէսը «Վէստնիկ» է։ Բարձր է, որը հետեւեալ եղբակացութեան կը հանգի Մակեդոնիոյ կացութեան նկատմամբ։

«Անցեալ փորձառութիւնները մեզ կարգիւն գիւրմանագէտներու սովորական պատրանքը ընդունելէ Օսմ. կայսրութեան ներքին բարենորոգումներու կարելիութեան վերաբերութեամբ։ Որքան երկար որ թուրքը տէր եւ վարիչ մնայ ոչ-Մահմետական բնակչութեամբ նահանգներու մէջ, անօգուտ է Բարձր. Գրան իրաւասութեան տակ գտնուող վիճակներու նիւթական որ եւ է փոփոխութիւն ակնկալել։ Եթէ երթադուէր թէ թուրք իշխանութիւնը ինքզինք բարեկարգելու փափաքով տոգորուած Սուլթանի Գիւրմանիա հպատակներուն նպատակաւոր քաղաքակրթութեան կառավարութեան մը նոր դրութիւնը հաստատել ուզած ըլլար։ Մահմետական աւանդութիւններու ներկայացուցիչներն ու արիւնեանները այդ տեսակ նորոգուելու քաղաքական մը դէմ պիտի զինուէին եւ ա-

(*) «Սվէթ» Մայիս 13, 1903

(**) «Նովոս Վոյսիս» 6 մայիս



ՆՊԱՍՏ ԶԵՅԹՈՒՆԻ

Խմբագիր

Դժբաղդ Զէյթունցի ազգայնոց մէջ տիրող սոսկալի եւ համաճարակ հիւանդութեանց պատճառաւ ինչպէս ալլուր նոյնպէս ու հոս, խորհրդոյս կողմանէ հանգանակութիւն մը բացուած եւ որուն զուտ հասոյթը որ է 340 Փր. ոսկի, չէքով մը ասկէ 3 օր առաջ զրկուած է կ. Պոլսոյ Պատրիարքարանին իւր նպատակին ծառայեցնելու նկատմամբ:

Այլ խմբագիր տէր, կը խնդրենք որ ազգասիրաբար հրատարակէք զայս ի գիտութիւն ամենեկուն ձեր մօտակայ մի թիւին մէջ:

Խնդրելով որ հաճիք ընդունի մեր յարգանքներն:

Ի զիմաց Թաղ. Խորհրդոյ
Վ. Աստուածաբան Աստուածատ
Ս. Խաչատրեան Ս. Ա. Փափագեան
(Կնիք)

Վերին 26 մայիս 1903

Տէր Խմբագիր,

Տեղւոյս փառաբան հայ գողութիւն ալ մասնակցած է ինչպիսի Զէյթունի կազմակերպուած հանգանակութեան. եւ այսօր նամակատան յանձնուած է տասը (10) գողը. ոսկի Պատրիարքարանի հասցէին: Կը խնդրենք ներկայս յայտարարել հաճիք Ձեր թերթի սուղ էջերուն մէջ, ոչ թէ ի պարծանս տեղւոյս գողութիւն, ալ ի բարբառի օրինակ մը ուրիշ քաղաքներու:

Մնամ յարգանք
Ս. Արգարեան

ԱԶԳԱՅԻՆ

ՆՊԱՍՏ-Ե Յանձնաժողովը, որ ինչպէս որբանոցներու նոյնպէս եւ գաւառներու աղքատ վարժարանաց կը նպաստէ, հասոյթի հոր աղբիւրներ գտնելէ յոսանաւոր, վերջապէս ձեռք առեր է իրեն հասոյթի միջոց գտնագրելու հրատարակելու եւ արդէն իսկ հրատարակուածները արդիւնաւոր վիճակի մը մէջ պնդու խնդիր:

Նոր կարգադրութեամբ մը գաւառական վարժարաններու ի նպաստ գաւառներէ պիտի պատրաստուին մրցմամբ, եւ զրքեր պիտի տպագրուին նպատակի Սնտուկին հաշուին եւ հասոյթին ալ հոն պիտի յանձնուի: Այս պարագային բնական է որ մասնաւորապէս հայ գրավաճառներու եւ նրապատից Յանձնաժողովոյ միջեւ մրցում մը պիտի սկսի: Բայց ի հարկէ բոլոր ազգ. վարժարաններու հազարաւորութիւնները պիտի նախընտրեն յանձնաժողովի գրքերուն գործածութիւնը իրենց տնօրի ութեան տակ գտնուող վարժարաններու մէջ: Հետեւաբար գոյիզ մը պիտի ախի հայ գրավաճառներուն համար իսկ Պուլիարիոյ միտակ գրավաճառ Պ. Զարգանէիան աւել զոյգէն չվախար քանի որ նա ի հարկին հայ թերթի մը շրջուն գործակաւարը ըլլալով ալ կրնայ շահիլ. ուստի կը պատահէ իրմէ որ մասնաւորապէս նպատակից Յանձնաժողովոյ գրքերը սպառելու աշխատի:

— ԿիւիկիոՅ Ս. Կաթողիկոսին կ. Պուլիս գաւառ համար պէտք եղած պաշտօնական ձեւակերպութիւնները կուտարուած են Պատրիարքարանի կողմէ եւ ի մօտոյ իրեն հրատարակելու պիտի ուղղուի:

— ՕՐԻՆԱԿԵԼԻ ՆՈՒԷՐ ՄԸ. — Եկատիրինոսար քաղաքէն Տ. Աւետեան կրթութեւ պաշտօնը անցնալ տարի իր ամուսնութեան ամսին կնոջը փոխանակ նիւթական նուէրներ բնելու, որոշած էր 30,000 րուպիոյ յատկացնել թէկոսին մէջ աղկանց վարժարան մը բանալու կնոջը անուանով: Այդ վարժարանը արդիւն բացուած է եւ ար-

դիւնաւոր ընթացք մը ունի կրթութեւ յարց գործարար տիկին Աւետեան անցնալ շարժու մեներ է. յուզարկաւորութիւնը շատ փառաւոր կատարուել է: Տ) պատկերը գրուել են գաղափար վրայ:

— ՊԱՊԱՆԱՆ Նուիրակ Մօնա. Պօնէզդի անցնալ շարժու Պոլսէն Նիկովիզիա գաղափար ըլլալով, տեղւոյն Հայոց Առաջնորդ Տ. Ստեփաննոս Արքեպի հետ ողջագործուած եւ հետեւեալ կերպով խօսակցած է ըստ «Բիւզանդոն» թղթակցին. «Նուիրակը չնչոնց էր ծ. ի բաղձանքը որ է Եկեղեցիներուն հոգեւոր միութիւնը: Ստեփաննոս Սրբազան պատասխանեց թէ ասիկա բոլոր քրիստոնէից ալ փառքն է թէպէտ, բայց քանի որ պատճառներ կան որ մեր օրով ասանկ բան տեսնուելիք չունի, լուսազոյն յանձնարարութիւնը պիտի ըլլար գործարար Յիսուսի Տեառն մերոյ պատուէրը, որ է սիրել զմիմեանս: Սէրը ամէն անհարթութիւն կը բաժնայ եւ գործունէ է ամէն գաղթականութեան: Մօնա. Պօնէզդի պատասխանեց թէ քրիստոնէայ եկեղեցականի մը համար սքանչելի սկզբունք մըն է այս, եւ արդէն ինք Պոլսոյ գաւառներէն ի վեր բարձր համարում ստացած է Հայ Եկեղեցոյ եւ անոր գլխաւոր ներկայացուցիչներուն վրայ: Գաւառի տոգորուած տեսնելով զուտ աւետարանական սկզբունքներով: Անձնապէս գիտէ որ էր ծ. Պապն ալ շատ մեծ համարում ունի Հայ Եկեղեցոյն վրայ, եւ պատրաստ է անոր ուղղափառութիւնը եւ կաթողիկէութիւնը հոշակել եւ հաստատել, եթէ միութեան սկզբունքն ընդունուի:

«Փաստաբան Թընկեր Սիմօն էֆ. որ գաւառական գործով մը հոն գտնուած ըլլալով, թարգմանի պաշտօնը կը վարէր, Հայ եկեղեցականներու համար Մօնա. Պօնէզդի օրհնութիւնը խնդրեց: Պապական Նուիրակը զգուշացաւ Հռոմայ հետ հոգեւոր հաղորդակցութեան մէջ չգտնուող եկեղեցականներուն օրհնութիւն տալէ (*). բայց օրհնեց:

(*) ԴիՏ. ԽՄԲ. — Հարիւր հազարաւոր քրիստոնէաներ ջարդող եւ Վրիստոնէութեան մեծագոյն պաշտօնը Սուլթան Համիտին համար նոյն իսկ եկեղեցոյ բեմերէն օրհնութիւն կարգադրուելէն զգուշանալ աւել Պապական «բեր» երը:

այս թարգմանն որ իրեն զաւանակից մըն է:

— ՎՐԻՊԱԿ. — Շաբաթ օրուան Իրաւունք» թիւ «Առաջնորդական ընտրութիւն» յօդուածին մէջ տպուած «Կարնոյն» պիտի ըլլայ «Վանի»:

ՎԱՌՆԱՅԻ Նորակազմ Աղքատախնամը կիրակի օր իր Ա. նիստը ունեցաւ: Եւ րոտեց Լօթը անձերէ բաղկացեալ անժամանակեայ Գործողի ժողով մը, որուն առաջին գործը պիտի ըլլայ Յանձնախումբին հետ քննելով պատրաստուած կանոնագիրը, անոր ինչ ինչ կէտերը բարեկոխել եւ յառաջիկայ կիրակի ներկայացնել Ընդհ. Ժողովոյ:

ԲԱՌԱՆ
ՊՈԼԿԱՐԵԼԷՆ. — ՀԱՅԵՐԷՆ — ՏԱՃԵՐԷՆ
ՅՕՐԻՆԵՑ
ԱՍՏՈՆՈՐ ՄԿՐՏԵՑԵԱՆ

Կը բաղկանայ 500է աւելի երկսեւեակ երիտներէ, ընտիր թուղթի վրայ մաքուր տպագրութեամբ, պարունակելով Պուլիարիէն լեզուի գործածական գրիթէ բոլոր բառերը եւ ոճերը — մօտ 30,000:

Հրատարակուած են առաջին մի քանի պրակները եւ միացեալին տպագրութիւնը մեծ փութով յառաջ կը տարուի, այս պատակով կազմուած Մասնախումբին հսկողութեան տակ:

Բաւականորոշակն է 5 Փր. կանխիկ ճամբու ծախքը մեր վրայ: Տապագրութիւնը երբ աւարտի, բաժանորդք այն ատեն պիտի ստանան Բառարանը կազմուած: Իսկ եթէ ուղղութիւնը ըլլան, հրատարակուած պրակները հետըզհետէ եւս կրնանք զրկել (չորսը մէկ ծրարով):

Տպագրութիւնը աւարտելէն վերջը գիծն պիտի բարձրանայ: Դրամի փութարէն նամակագրօջ մը չընդունուի:

Հասոյթին մէկ մասը յատկացուած է տեղւոյս ազգ. վարժարանին:

Փափաքողք բաժանորդագրուելու համար զիմեւ եւս Մասնախումբին գանձապետին հետեւեալ հասցէով:

Տ. Մաքրոս Յակոբեան — Սօֆիա
Մանթ. — Հայաշատ քաղաքներէ բաժանորդագրուել ուղղութիւնը կրնան գիմել նաեւ իրենց բնակած քաղաքի թաղ. Խորհրդին:

ՄԱՍՆԱՆՈՒՄԲ

«Ախ, այո՛, ճանչցա՛յ. . . նշանածս էր ան: Ձեմ յիշել, չեմ յիշել թէ ի՞նչ եղայ. . . ի՞նչ զգացի այդ պահուն:»

— «Կտրե՛ճս. . . Աստուծոյ սիրոյն ըլլա՛յ, հեռացի՛ր ասկից. . . գնա՛, ապառէ՛ ինքզինքդ այս տրեւնալի յարկէն. . . գնա՛, թող մէկը չը տեսնէ քու հոս մտնելը, եթէ ո՛չ կուպաննեն քեզ: Աստուծո՛ք իմ, ինչպէ՛ս մտար ներս. . . գանապանին ի՞նչ ըսել որ թողուց. . .»

— «Մի՛ կասկածիր. . . միայն ըսէ՛ թէ՛ «չեմ մոռցեր քեզ եւ կը սիրեմ. . .» ընդհատեց նշանածս:

— «Ձեմ մոռցեր քեզ ու յաւիտեան պիտի սիրեմ. . . թողովցի եւ ու անոր վրէպ մէջ իշխալով համբոյրներս տուի:

— «Մտիկ ըրէ՛, ըսաւ նշանածս, եւ քու պարտեղիք մէջ կախատեմ պարտիզպանին քով: Ասիկայ քու սիրոյդ համար ըրած եմ. . .»

— «Լա՛ւ. . . ուրիշմի կրնանք տեսնուիլ, վրայ բերի եւ ու խնդրեցի որ մեկնի:

«Նշանածս հարեմք յետնապիւղը գտնուած միջանցքէն պարտեղը մտաւ ու նոճիկ ծառերուն մէջ անյայտ եղաւ:

«Է՛հ, Մէլլի՛, այնուհետեւ մտածեցինք թէ ինչպէ՛ս կրնայինք փախչիլ եւ երջանիկ ըլլալ:

«Օրեր, չարաթիւեր ու ամբասներ անցան. . . իրեկուն մը, նշանածին հետ տեսնուած միջոցին, նա ժիշտներէս մին կը տեսնէ ու գործը կը հասկցունէ փաշային: Աւա՛ղ, այդ գիշերը կը հեռացունեն զինքը պարտեղէն: Ալ յոյսս կտրուեւ պարտաւորուեցայ, որովհետեւ ամէն կերպով հսկողութեան տակ

զրկի գիտ:»

«Արտաքրտնիլը ծանր էր նշանածին համար. . . այդ պատճառաւ ծայրայեղ յուսանաւորութեամբ մը կը յարձակի փաշային վրայ, կըսպաննէ զանի ու տառն օր ետքը կը կախուի. . .»

— «Կը տեսնե՛ս, Մէլլի՛, ի՞նչ սեւ է եղեր ճակատագիրս: Ալ ի՞նչ լնէի. . . Ուստեցի որ տաւարաղը նշանածին յիշատակով ապրիմ: Ախ, յղի էի. . . Ասիկա տոկոմ կուտար ինձի. . . այդ պատճառաւ շատ անգամ թոյնի մը կախիլին կարօտը կը քաշէի: Կարծես թէ՛ գիտէի ծնած գաւիկն ի՞նչ ըլլալը. . . գիտէի թէ՛ ոճրագործի մը գաւազը հրէշ մը պիտի ըլլար: Ձէի սխալած. . . Տխուր նախազգացումը յայտնած էր ինձի թէ՛ տպագրային մէջ աղետալի տեսարաններ ալ պիտի տեսնէի:»

Ու Մեծ-Հանըմը լսեց: Սիրտը պարպած էր. . . կարծես թէ հոգեւոյն զանութիւնը թափած էր ամբողջովին: Յետոյ արցունքը սրեց ու յարեց.

— «Ախ, Մէլլի՛, յիշէ՛ որ քու թշուառութիւնդ ունեցած եմ. . . յիշէ՛ որ տրեւնով, ոճիրներով եւ դարձուրելի չարագործութիւններով ի՛նչ յարկի մը տակ ապրած եմ ցարդ: Այն գաւազը՝ զոր եւ ծնած եմ, միշտ ատելի եղած է ինձի, ու ես երբեք մայրական գորով մը չը զգացի անոր համար: Ըովանդակ կեանքիս մէջ, իր մահկանութեան ժամանակ երեսը չուզեցի տեսնել. . . պատանեկութիւնը հեղուանցուց աչքէս. . . իսկ հիմալ հարկադրուեցայ իր ետեւէն գալ, որովհետեւ չէի կրնար մերժել անոր կամքը: Զնամարտը կըսեմ, Մէլլի՛, չեմ սիրած զինքը, եւ չեմ կրնար ատելէ դարձել. . . Կը տեսնեմ թէ եղբայրասպան հօրը պէս արեւնով, ոճիրներ-

րով ու չարագործութիւններով կը մոռցանէ իր հօգին. . . կը տեսնեմ թէ իր սպրած յարկերուն տակ հառաջանք ու արցունք սփռելով կանցունէ: Քանի՛ քանի՛ ծաղկաւոր աղջիկներու արեւը մտած է. . . Անոր ձեռքը չարիք պատրաստելու սանդուղի է, Ո՛չ Աստուած ունի, ո՛չ ալ խիղճ: Այո՛, վախցի՛ր անկից. . . սեւ օձը շտառ աւելի զգացում ունի, քան թէ ատ հրէշն՝ որ իմ գաւազն է. . . Գիտցի՛ր որ գաղան մը սիրտ ունի, բայց անկա զուրկ է գաղանի մը սրտէն ալ: Մէկ խօսքով՝ ըսան մը մէջ աւազակէ մը բռնարարութեամբ թշուառ աղջկան մը հրէշ գաւազն է ան, որ մարդու կերպարանք ունի. . .»

Մեծ-Հանըմը խղիւղեցաւ. . . ատելութիւնը՝ զոր կը զգար իր մէկ հատիկ գաւիկն նկատմամբ, երթալով կը պատկերուէր իր աղուոր ու տօգոյն կերպարանքին վրայ, ուր վաղահաս վիշտը թողած էր զանութիւն մը ամենէն կակծալի երեւոյթը:

— Ո՛հ, Մեծ-Հանըմ, մըմնաց Մէլլի՛ զողջալով իրա՛ւ որ քու պատմութիւնդ սարսաղի է, եւ քու թշուառութիւնդ՝ այս արեւնով, ոճիրներով ու չարագործութիւններով ի՛նչ յարկին տակ, աղետալի եղած է: Մեկնոյն ատեն, համամասն ճակատագիրը մըն է որ զին քու քովը կը բերէ, այնպէս չէ՞:

— Այո՛, սիրելի աղջիկ, թողովցի Մեծ-Հանըմը, համամասն ճակատագիր մը տարիներէ ետքը քեզ այս դարձուրելի սեմերէն ներս մտցուց որ մէկտեղ տառապէնք, մէկտեղ արտասու էրեք եւ մէկտեղ անցունէինք մեր թշուառ օրերը. . .»

(Շարունակելի)

